ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Քրիստինա Այվազյան

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *բարեգործություն, հայ ժողովրդական հեքիաթներ, դրդապատճառ, որդեծնություն, մեղքերի քավություն, հարուստ, աղքատ:*

ՄՈՒՏՔ

Տարբեր կրոնափիլիսոփայական ուսմունքներում այլասիրությունը[1], բարությունը, մարդասիրությունը և կարեկցանքը համարվում են անձի կարևորագույն հատկորոշիչներ[2]: Կարեկցանքը մարդկանց կյանքի կազմակերպման համար կենսական անհրաժեշտություն է. այն հոգեբանական շղթաներով իրար է կապում մարդկանց, որը նպաստում է սոցիալական տարբեր խմբերի ձևավորմանն ու դրանց բնականոն զարգացմանը[3]: Բարեգործությունը կապված է մարդկանց բարոյական արժեքների, կրոնական հավատալիքների[4], սոցիալ-մշակութային ըմբռնումների հետ: Ողորմությունը մի կողմից հարստության և ընծայի բարոյական ըմբռնման արդյունքն է, մյուս կողմից՝ զոհաբերության[5]:

Հնուց անտի տարբեր հասարակություններում կենցաղավարել են թե՛ զոհաբերությունները, թե՛ նվերների փոխանակությունը և թե՛ ընծաները: Հասարակական օգնության ամենատարածված ձևը նվիրատվությունն է: Նվերը պատասխան նվեր է ենթադրում, որը ծիսական նվիրափոխանակության օրենքն է[6]: Սակայն մեր ուսումնասիրությունը նվիրված է անփոխադարձ բարեգործությանը, որն իր արտացոլումն է գտել հայ ժողովրդական հեքիաթներում և բանահյուսության այլ ժանրերում ևս, որոնցով կհամալրվեն հեքիաթներից բերված օրինակները:

Հեթանոսության շրջանում տարածված է եղել առատաձեռնության երևույթը. Նեմեսիս աստվածուհին վրեժխնդիր էր լինում աստվածների և աղքատների փոխարեն որոշ մարդկանց ունեցած ավելորդ երջանկության և հարստության համար, որոնք պետք է ազատվեին դրանցից[7]:

Սակայն Հին Արևելքի հիերարխիկ հասարակություններում աղքատությունը հոգևոր կարգի արատ էր, մինչդեռ քրիստոնեությունը պաշտպանում էր ճնշվածներին ու աղքատներին, և աղքատասիրությունը նրա գլխավոր պատվիրաններից էր[8]: Գթասրտությունն ու ողորմությունը աշխարհում տարածվել են քրիստոնեության և իսլամի հետ[9]:

Սույն հոդվածի շրջանակներում ողորմատվությունն ու բարեգործությունը կդիտարկենք հրաշապատում և իրապատում հեքիաթներում բովանդակային առումով, ինչպես նաև *լեզվական-խոսքային*, *պատմաազգագրական*, *սոցիալ-հոգեբանական* և *կրոնական* մակարդակներում:

** Հոդվածը ներկայացվել է 04.09.2019 թ., հրատարակության երաշխավորել ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Նվարդ Վարդանյանը (09.05.2019 թ.), ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Այլասիրությունը կամ ալտրուիզմը «սահմանվում է որպես այլ անձնավորությանն օգնելուն ուղղված անշահախնդիր գործողություն, որը չի ուղեկցվում դիմացինի կողմից խրախուսանքի կամ փոխհատուցման (հոգեբանական իմաստով) նկատելի դրսևորումներով» (Զոնապյան Լ., Կարեկցանքի հոգեբանական ակունքները (ուսումնաօժանդակ ձեռնարկ բուհերի ուսանողների համար), Ե., 1987, էջ 21):

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 4:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս Гуревич А., Проблемы генезиса феодализма в Западной Европе, М., 1970, с. 81-82.

[5] Տե՛ս Мосс М., Общества, обмен, личность, Москва, 1996, с. 109.

[6] Տե՛ս Շագոյան Գ., Օգնություն, կամեցողություն թե՞ պարտականություն, «Պատմություններ աղքատության մասին», Ե., 2001, էջ 365:

[7] Դա ընծայի հնագույն բարոյախոսությունն է, որը դարձել է արդարության սկզբունքը. և՛ աստվածները, և՛ ոգիները կամենում են, որ այն բաժինը, որը հատկացվում էր իրենց և ոչնչացվում անօգուտ զոհաբերություններով, ծառայեր աղքատներին և երեխաներին (տե՛ս Мосс М., Общества, обмен, личность, с. 109):

[8] Տե՛ս Պետրոսյան Հ., Աղքատություն. Ընկալում և վերաբերմունք, «Պատմություններ աղքատության մասին», Ե., 2001, էջ 381:

[9] Տե՛ս Мосс М., Общества, обмен, личность, с. 110.

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹ ԵՎ ԴՐԱ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Հայոց պատմության մեջ առաջին աղքատանոցները հայտնի են դեռևս Ներսես Մեծ կաթողիկոսից (329-373 թթ.). «...Յայտ արարեալ զպատեհ պատեհ տեղիսն զատուցանել, շինել աղքատանոցս, և ի ժողովել զախտաժէտս և զօրկունս և զմարմնավարս և զամենայն ցաւոտս. և նոցուն կարգեցին օրկանոցս և դարմանոց և ռոճիկս, և պատանս աղքատաց»[1]:

Իր աղքատախնամ գործունեությամբ հայտնի էր նաև Աշոտ Գ Բագրատունի (953-977 թթ.) արքան: Նա հաշմվածների, խեղանդամների ու կարիքավորների նկատմամբ ունեցած իր հոգածությամբ պատմության մեջ մնաց իբրև *Ողորմած* թագավոր և, ինչպես հաղորդում է Ստեփանոս Տարոնեցի պատմիչը, քավեց իր մեղքերը ողորմությամբ[2]:

Անցյալի բազմաթիվ հայոց թագուհիներ և իշխանուհիներ հայտնի են իրենց կատարած բարեգործություններով, ինչպես օրինակ՝ Կիլիկյան Հայաստանի Զաբել թագուհին, որին Ավետիս գրիչը կոչում է «զողորմածն, զաղքատասէրն, զբազմաբաշխն, զլցեալն ամենայն բարութեամբ», իսկ Կ. Գանձակեցին՝ «բարեգործ, ողորմած և աղքատասէր»: Կեռան թագուհու մասին հիշատակագիրն ասում է «զամենաբարեգործ և զքրիստոսասէր դշխոյ»: Գրիգոր և Շուշիկ Պահլավունիները զբաղվում էին գերիների և բանտարկյալների գնմամբ և ազատությամբ, աղքատների կերակրմամբ, սգավորներին մխիթարելով, չքավորների պարտքերը փոխհատուցելով[3]:

Հայոց մեջ տարածված էր այն մտայնությունը, որ «ունեցողը չունեցողին պարտական ա»[4]: Դեռևս 1901 թ. բժիշկ Ա. Բուդուղյանը իր «Կարիք և բարեգործութիւն» գրքում գրում է, որ ժողովուրդը հետևում է «Քրիստոսի անունով խնդրողին տուր» սկզբունքին[5]:

XIX դարավերջի ազգագրական նյութերը վկայում են, որ մշեցի կինը «իր աղքատ դրացին, աղքատ ազգականը, աղքատիկ հեռաւոր ազգակիցը կը կերակրէ, կը հագուեցնէ, անձայն, անշշուկ, միշտ ջանալով իր ըրածն ու ընելիքը տանը էրիկ մարդերեն ծածկել...: «Դուռը զարնողին հաց տալու է, կարօտ եղողին օգնելու է», աւասիկ ինչ-որ մշեցի կնոջ բնաւորութեան էական մասը կը կազմէ»[6]:

Ս. Լիսիցյանի հաղորդմամբ Լեռնային Ղարաբաղում աղքատներին օգնելը համարվում էր բարոյական պարտք: Բերքահավաքից և ամեն հաց թխելուց առանձնացվում էր նրանց բաժինը[7]: Հայ կենցաղում ընդունված էր բերքի առաջին պտուղներից կամ նորածին գառը մորթելիս բաժին հանել ոչ միայն բարեկամներին, այլև եկեղեցուն, քահանային, աղքատներին, դրանք գերեզմանոց տանել, հոգեհաց պատրաստել[8]: Ռուսական միջավայրում ևս հատկապես տոնական օրերին և ննջեցյալների հիշատակության ժամանակ գյուղացիները իրենց պատուհանագոգերին

---

[1] *«Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Ե., 1987, էջ 118-120:*

[2] *«Զգոնջացեալսն և կկաղսն և կկոյրսն հաւաքէր առ ինքն, բարձակից ինքեան առնելով ի խրախճանութիւնսն, զոմանս ի նոցանէ իշխանս և իշխանաց իշխանս և կիւրապաղատս անուանէր և զբոսնոյր նոքօք և զքոսն կարմիր և զվէրս նոցա առաջի աչաց իւրոց փոխանակ զարդուց և ականց փայլելոց համարէր: Այլ և բաժակն իւր թագաւորական ըմպելեօք մատուցանէր նոցա, և յորժամ թարախ վիրաց նոցա խառնէր ընդ գինւոյն՝ յայնժամ զմնացորդս նոցա առեալ ինքն ճաշակէր: Եւ այնքան առատաձեռնութեամբ բաշխէր կարօտելոց՝ մինչև ի մահուն իւրոյ ոչ լինել դրամ մի ի գանձատան նորա. այլ զկապուտ զարդուցն և զբազմականացն և որմոց տայր կարօտելոց: Եւ քաւեաց զմեղս իւր ողորմութեամբ և գթով տնանկաց» (Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, ի Ս. Պետերբուրգ, 1885, էջ 180-181):*

[3] *Տե՛ս Հ. Վ. վ. Հացունի, Հայուհին պատմութեան առջև, Վենետիկ, 1936, էջ 208-209:*

[4] *«Հայ ազգագրություն և բանահյուսություն» (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 9. Էջմիածնի և Աշտարակի բանահյուսությունից, գրի առավ Ա. Նազարյանը, Ե., 1978, էջ 147:*

[5] *Տե՛ս Բուդուղեան Ա., Կարիք և բարեգործութիւն, Նոր Նախիջևան, 1901, էջ 49:*

[6] *Անդրէասյան Գ., Մշեցի կինը, «Բիւրակն», 1898, թիւ 3, էջ 42:*

[7] *Տե՛ս ՀԱԲ, հ. 12, Լիսիցյան Ս., Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Ե., 1981, էջ 44: Ըստ ռուսների՝ քիչ թե շատ հնարավորություն ունենալու դեպքում խնդրողին մերժելը մեղք էր [Бочечкаров Н., О нищенстве и разных видах благотворительности, Архив исторических и практических сведений, относящихся до России, книга третья (с приложением), С.-Петербург, 1859, с. 55]:*

[8] *Լալայեան Ե., Ծիսական կարգերը հայոց մէջ ըստ Հ. Սպենսերի. Ընծաներ, «Ազգագրական հանդէս», գ. XXIII, 1912, էջ 212-213:*

դնում էին ոչ թե ուտելիքի մնացորդները, այլ ճաշկերույթի «նուբարը»[1]: Երբեմն «Բուն Բարեկենդանի»[2] անվանումը բացատրում էին «բարի անցկացնելու», «բարի մարդ», «բարի կենդանի» լինելու հանգամանքով, որպեսզի ողջ տարին «բարի բան տեսնեին»[3]: Աղքատներին պարտադիր բարեկենդանյան խնջույքներին մասնակից դարձնելը կապված էր «բարեկեցությունն ապահովելու նպատակ հետապնդող» զոհաբերության և «սոցիալական հավասարության երևութական վիճակ ստեղծելու հետ»[4]:

Կարեկցանքը, բարիք գործելը և նվիրատվությունը իրենց արտացոլումն են գտել հայ բանահյուսության տարբեր ժանրերում: Այս առումով հատկապես բազմաթիվ են առած-ասացվածքները: *«Լավություն արա, ջուրը գցի, ձուկը չիմանա, Աստված կիմանա», «Լավություն արա ջուրը քցի, մարդը չիմանա, ձուկը հո կիմանա», «Լավությունը ջուրն էլ քցես, չի կորչի», «Աղեկութեն արա, թա՛լ (գցիր) թող ջուրը տանե», «Լավութինն արա ջուրը ձգե, մի օր դուս կը գա աղաքդ (առջևդ)», «Խեր (բարիք), կը գտնա վիր տեր», «Ապրի ապրեցնողը, ծաղկի ծաղկեցնողը», «Ընող ես՝ գտնող ես», «Արարմունքը փոխ հաց ա, մարդիս առաջը կը գա», «Աջով տուր, որ ձախով առնես», «Խեր կամեցի՛, որ խերու ռաստ գաս (հանդիպել)», «Ողորմողին ուրիշը կողորմի»*[5]: Այս ասացվածքները կիրառվում են նաև հայ ժողովրդական հեքիաթներում, բայց կան հեքիաթներ, որոնց հենց վերնագրերն են նմանատիպ ասացվածքներ, ինչպես օրինակ՝ «Լավություն անողը լավություն կստանա»[6], «Ով անի պարութին՝ կստանա անմահութին»[7], «Լուվոթունը կորչիլ չի»[8], «Ինչ որ ցանես, ըն էլ կինձես»[9] և ն:

Բարիք անելու համար հեքիաթների բարբառային բնագրերում կիրառվում են «վարձք անել» և «խեր-խեյրաթ անել», «խեյրաթխանա (աղքատանոց) բացել» արտահայտությունները: «Վարձքը» Ստ. Մալխասյանցը մեկնում է իբրև «բարեպաշտական գործ, որի վարձը սպասում են ստանալ Աստծուց»[10], իսկ Էդ. Աղայանը այն մեկնաբանում է որպես «բարի գործ, արարք, որի համար վարձատրությունը լոկ բարոյական փոխհատուցումն է»[11]: Հետաքրքիր է, որ «օգնություն» բառը հայոց մեջ նշանակում է թե՛ անվարձահատույց բարեգործություն և թե՛ փոխօգնություն[12]:

Ամարնե-Թոմփսոն-Ութերի «Միջազգային հեքիաթների տիպերի»[13]՝ ATU 756E* թվահամարի՝ «Բարեգործությունը վարձատրվում է» խորագիրն ունեցող հեքիաթախմբի «Բարեհոգի հարսը» հեքիաթում[14] հարևանի հղի հարսին (որի սիրտը միս էր ուզում) գառ նվիրող կինը երևում է Երուսաղեմ ուխտի գնացած սկեսրայրին և սկեսրոջը: Ամենավերջում պարզ է դառնում հարսի կատարած բարիքի նշանակությունը, որն իր հաստատումն է գտնում նմանատիպ «Իսուսի գերեզմանը»[15] և «Ամեն օմքնու վարձքը իրա առաչը կերթայ»[16] հեքիաթներում: Այստեղ հերոսները

---

[1] *Տե՛ս Бочечкаров Н., О нищенстве и разных видах благотворительности, Архив исторических и практических сведений, относящихся до России, книга третья (с приложением), С.- Петербург, 1859, с. 55.*

[2] *Մեծ պահքի առաջին կիրակին:*

[3] *«Հայ ավգագրություն և բանահյուսություն», 9, Օդաբաշյան Ա., Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում, Ե., 1978, էջ 26:*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 44:*

[5] *Ղանալանյան Ա., Առածանի, Ե., 1960, էջ 122, 124, 126, 127, 159, 174:*

[6] *«Հայ ժողովրդական հեքիաթներ» (այսուհետ՝ ՀԺՀ), հ. III. Այրարատ, հավելված, № 15, Ե., 1962, էջ 469-473:*

[7] *ՀԺՀ, հ. VI. Գանձակ-Տավուշ, № 114, Ե., 1973, էջ 485-489:*

[8] *Նույն տեղում, հ. VII. Սյունիք (Զանգեզուր), № 199, Ե., 1979, էջ 528-530:*

[9] *Նույն տեղում, հ. II. Այրարատ, № 46, Ե., 1959, էջ 487-488:*

[10] *«Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ս. Մալխասեանց, հ. չորրորդ, Ե., 1945, էջ 313:*

[11] *Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Ե., 1976, էջ 1368:*

[12] *Տե՛ս Զաքարյան Թ., Փոխօգնության ձևերը և բարեգործական ավանդույթները հայոց մեջ (ավանդույթ և նորույթ), «Արդի հայ իրականության և մարդասիրական գիտակցության զարգացման հարցեր», Ե., 2001, էջ 120:*

[13] *Uther H.-J., The types of International Folktales. A Classification and Bibliography, I, II, III, FF Communications, Helsinki, Academia Sceientiarum Fennica, 2011.*

[14] *Տե՛ս ՀԺՀ, հ. II. Այրարատ, № 44, «Երուսաղեմ դու գնացիր», էջ 461-464; «Հայ ավգագրություն և բանահյուսություն», հ. 14. Գեղարքունիք, Գրիգորյան Ռ., № 60 (69), «Բարի խարս», Ե., 1983, էջ 159:*

[15] *Տե՛ս ՀԺՀ, հ. XV. Վասպուրական, № 23, Ե., 1998, էջ 169-170:*

[16] *Տէր-Աղեքսանդրեան Գ., Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը, մասն Ա, Բանաստեղծութիւնք, Թիֆլիս, 1885, էջ 394-395:*

Երուսաղեմ ուխտի գնալուց ինքնակամորեն հրաժարվում են՝ նախընտրելով նվիրատվություն անել աղքատին: Այդ բոլոր հեքիաթներում էլ ողորմատվությունը նույնանում է Քրիստոսի գերեզմանին ուխտի գնալուն: Բարեգործ հերոսների հոգիները ուխտավորներին երևում են ուխտի ճանապարհին իրենցից առաջ:

Հայոց ավանդական կենցաղում հյուրասիրությունը ևս դիտվել է իբրև բարիք: Կիլիկյան Հայաստանում վանքերում կային հյուրանոցներ, սակայն հայ կանայք չէին զլանում գիշերելու կարիք ունեցողներին իրենց տանը ընդունել[1]: Արցախից գրառված «Աստված հըսցըրուց» հեքիաթում[2] հերոսուհին, որ ոչինչ չուներ կերակրելու իր զավակներին, դուռը ծեծող «ղարիբ ղոնաղին» պատասխանում է. «Ղոնաղն ըստուծենն ա»[3]: Նրան ներս է հրավիրում, բացատրում, որ ուտելիք չունեն, քարեր է լցրել կաթսայի մեջ, դրել կրակին, երեխաներին համոզել, որ քնեն-արթնանան, ճաշը պատրաստ կլինի: Հյուրը մոտենում է կաթսային, խաչակնքում և հայտնում կնոջը, որ ոչխարի մսով կերակուրը պատրաստ է, երեխաները կարող են ուտել: Կինը, երբ տեսնում է, որ հյուրը չկա, հասկանում է, որ հյուրընկալել էր Աստծուն[4]:

ԲԱՐԻՔ ԱՆԵԼՈՒ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Բարեգործությունը առհասարակ և մասնավորաբար հեքիաթներում դիտվում է իբրև **սոցիալ-հոգեբանական երևույթ**: «Խիղճ-անխիղճ մարդը» հեքիաթում[5] մարդ ու կին են լինում. «Կինը շատ խղճով ա լինում, քասիբներին ողորմություն ա տալիս, իսկ մարդը ձեռքներից խլում ա»: Մի օր էլ ամուսինը երազում տեսնում է, որ ինքն ընկել է ցեխի մեջ ու չարչարվում է, իսկ կինը ճոխ սեղանի առաջ ուտում-խմում է[6]: Մարդը ձեռքը պարզում է, որ ինքն էլ ուտի, սակայն չի հասնում: Կինը նրան բացատրում է, որ դրա պատճառն այն է, որ ամուսինը աղքատներին ողորմություն չի տալիս: Այդուհետև ամուսինը սկսում է այնքան բաժանել ունեցած-չունեցածը, որ աղքատանում են: Երբ իրենք են սկսում ողորմություն հավաքել, կնոջը բոլորը օգնում են, իսկ ամուսնուն՝ ոչ[7]:

Այս հեքիաթում, երբ թագավորը իմանում է, որ ծառան իր կնոջը մենակ, սոված-ծարավ է թողել ծառի փչակում, ասում է, որ եթե կինը խղճով է եղել, ողջ մնացած կլինի, հակառակ դեպքում գազաններն արդեն կերած կլինեն նրան[8]: Կնոջն օգնության եկած հրեշտակը՝ արջի կերպարանքով, ամուսնու վերադարձից հետո հրաժեշտ է տալիս՝ ասելով, որ արջ չէ, այլ կնոջ խիղճն[9] է:

Մարդասիրության թյուրըմբռնումը կարող է սոցիալական ծանր հետևանքներ ունենալ. անտարբերությամբ տրված ողորմությունը կարող է նպաստել փողոցային աղքատության զարգացմանը[10]:

---

[1] Տե՛ս Հ. Վ. վ. Հացունի, Հայուհին պատմութեան առջև, Վենետիկ, 1936, էջ 14:

[2] Տե՛ս ՀԺՀ, հ. VII, № 47, Ե., 1979, էջ 169-170

[3] Նույն տեղում, էջ 169:

[4] Հմմտ. Թագավորութիւններ Գ 17:8-16:

[5] Տե՛ս ՀԺՀ, հ. VIII. Գուգարք (Լոռի), № 112, Ե., 1977, էջ 651-669:

[6] Պահլավական կրոնաբարոյական պատկերացումների խտացումը հանդիսացող «Արտա Վիրապ նամակում» կինը հայտնվում է դժոխքում, ամուսինը՝ դրախտում: Կինը կարմանում է այս իրողության վրա, քանի որ կենդանության օրոք իրենց՝ ամուսինների համար ամեն ինչ ընդհանուր է եղել: Ամուսինը բացատրում է, որ ինքը գործադրել է բարեմտությունը, բարեխոսությունը և բարեգործությունը, իսկ կինը՝ չարամտությունը, չարախոսությունը և չարագործությունը: Ինքը ինչ ստացել է բարի մարդկանց, արժանավորների և չքավորների համար, տվել է նրանց, մինչդեռ կինը անգոսնել է նրանց: Ինքն անսացել է աստվածներին և արհամարհել դևերին, իսկ կինը հավատարիմ է եղել Ահրիմանի և դևերի կրոնին: Կինը նախատում է ամուսնուն. «Մեր կենդանության ժամանակ քո մարմինն ինձ վրա կատարյալ տեր և թագավոր էր, և իմ մարմինը, կյանքն ու հոգին քոնն էին, և իմ կերակուրը և այլ կարիքները և հագուստը քեզնից էին»: «Ապա ինչո՞ւ դրա համար չպատժեցիր ու չպատուհասեցիր ինձ, և քո վեհությունն ու ավնվությունն ինչու համար էր, երբ դու չսովորեցրիր ինձ, որ ես հետո վեհություն և ավնվություն անեի, և ահա այժմ կարիք չէր լինի այդ չարիքը կրելու»: Կինը իր կղզման համար դժոխքում միայն խավարի ու ժանտահոտության է արժանանում և այլ տառապանքներ չի ունենում, իսկ ամուսինը «դրախտում առաքինիների մեջ ամոթալի նստած էր, որովհետև նա չփոխեց և չսովորեցրեց այն կնոջը, որ նրա հետ եղած ժամանակ ավնվության հանգի» (տե՛ս Արտա Վիրապ նամակ, Յուշտի Ֆրիան, պահլավերեն բնագրից թարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Ռ.Աբրահամյան, Ե., 1958, էջ 93-95):

[7] Տե՛ս ՀԺՀ, հ. VIII. Գուգարք (Լոռի), № 112, էջ 651-652:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 655:

[9] Տե՛ս նույն տեղում, էջ 656:

[10] Տե՛ս Бочечкаров Н., նշվ. աշխ., էջ. 61:

Աղքատին բարիք անելը մեծահոգություն է, բայց նրան կարող է վարժեցնել ձրիակերության[1]: «Օսկերչու աշկերտ» հեքիաթում[2], երբ ոսկերիչն ուզում է մեկին՝ իբրև պանդխտի, մանր փող տալ, նա բարկանում է. «Կհերսոտիմ, օր դու ընծիկ աղեկութեն չէ, օր կէնիս, չարիք է կէնիս՝ էրկու չարեկ կիտաս, վաղ լե կսորվիմ, էրթամ ուրիշ դուռ կանիմ: Թե օր աղեկութեն կէնիս, ասե՝ արի իմ մոտ վարձվի, յա գնա, ֆըլան տեխ աշխատի, քզիկ իտարա էրե»[3]:

Հեքիաթների հերոսները բարիք են անում նաև սոցիալական կարգավիճակի փոփոխությունից հետո, երբ, օրինակ, աղքատը հայտնվում է հարուստի կարգավիճակում: «Թաքավորն ու նըղարաչին» հեքիաթում[4], երբ իր երաժշտությամբ փող վաստակող նաղարաչին դառնում է թագավոր, հրամայում է բանտերից ազատել մարդկանց, ուտելու հաց տալ, աղքատներին մի-մի ոսկի բաժանել, իսկ գյուղացի ընչազուրկներին մի օրավար հող տալ ապրուստի համար:

Եթե իշխանատենչ մարդը բարիք անելով սնուցում է իր նեղ եսասիրական ձգտումները և դրսևորում ցուցադրական վարքագիծ, ապա «դեմոկրատ» անձնավորությունը հաստատում է «եղբայրական սիրո» վրա հիմնված փոխհարաբերություն և կարծես կրկնում Վ. Սարոյանի «Մարդկային կատակերգության» հերոսի՝ Սփենգլըրի խոսքը. «Ես գիտեմ, թե դու ինչ ես զգում, որովհետև ինքս ապրել եմ նույնը: Բոլորս էլ զգացել ենք նույնը»[5]: Հայկական հեքիաթում սոցիալական ստորին աստիճանի վրա գտնվողը հայտնվում է վերևում և իբրև ներքևից վերևում հայտնված՝ չի մոռանում օգնել ներքևում գտնվողներին[6]:

Հայկական հեքիաթներում ողորմատվության դրդապատճառներից մեկն էլ **որդեծնությունն** է: Արցախից գրառված «Իմաստուն տղան» հեքիաթում[7] ժլատ հարուստի կինը ամուսնուն պատմում է, որ երազում որդի էր ունեցել, և հորդորում է գյուղացիներին ցորեն տալ. «Ա՛ մարթ,– ասում ա,– ե՛կ, քարը փըշկերքատ վեր ածե, մեր շինացուց կանչինք, ցորենը տանք, թող տանեն, կյուրունքահան ինին: Բալքյամ ըտրա սըդըղավը մին խոխա ինի մեզ»[8]: Մարդը համոզվում է և գյուղացիներին ցորեն տալիս առանց շահույթի:

«Անման Մուքայել» հեքիաթում[9] թագավորն ու թագուհին զավակ ունենալու դեպքում Աստծուն խոստանում են «յոթն օր եղ ու մեղր ցրվենք»[10]: Եվ այդպես էլ անում են: «Դունյա Գոզալի նաղըլը» հեքիաթում[11] նշվում է, որ «Աստու պատիժը ընգած ա ինըմ թաքուհու կլխին», նա երեխա չէր ունենում: Թագավորն ու թագուհին, հեքիմներին դիմելուց բացի, ոտաբոբիկ ուխտի էին գնում վանքեր ու եկեղեցիներ, աջ ու ձախ ողորմություն էին բաժանում, «թա ինչ ա Աստոծ մեխկը կյա»[12]: Եվ երբ մի օր թագուհին հղիանում է, թագավորն այնքան է ուրախանում, աշխարհով մեկ է լինում, որ սկսում է ավելի շատ ողորմություն տալ:

Այսինքն՝ հեքիաթների հերոսները բարեգործության են դիմում ինչպես խնդրանքի, այնպես էլ գոհաբանության պարագաներում: «Քյասըբի կերածը վարցկն ա» հեքիաթում[13] հարսանիքի օրը հարս ու փեսայի կյանքը հրեշտակները նրանց են բաշխում են նրանց կատարած բարեգործության համար: Ցնծությունից հայրը նորից հարսանիք է անում. «Ինչքան ախքատ կա՝ մեձրըմ

---

[1] Տե՛ս Բուդուղեան Ա., Կարիք և բարեգործութիւն, Նոր Նախիջևան, 1901, էջ 24:

[2] Տե՛ս ՀԺՀ, հ. XIII. Տուրուբերան (Մուշ-Տարոն), № 51, Ե., 1985, էջ 400-406:

[3] Նույն տեղում, էջ 400:

[4] Տե՛ս Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Մ. Ավչյանի ֆոնդ, «Սիսիանի բառ ու բանը», FFXI:3657-3660:

[5] Ջոնապյան Լ., Կարեկցանքի հոգեբանական ակունքները (ուսումնաօժանդակ ձեռնարկ բուհերի ուսանողների համար), Ե., 1987, էջ 65:

[6] Դանիացի հեքիաթագիր Հ.Ք.Անդերսենի «Հրահանը» հեքիաթում փինվորը հարստանալով սկսում է աղքատներին շատ փող տալ, քանի որ «նա իր փորձից գիտեր, թե որքա՜ն վատ բան է գրպանում մի գրոշ չունենալը» (տե՛ս Հ. Ք. Անդերսեն, Հեքիաթներ, Ե., 2005, էջ 7):

[7] Տե՛ս ՀԺՀ, հ. VI. Արցախ-Ուտիք, № 25, Ե., 1973, էջ 140-144:

[8] Նույն տեղում, էջ 140:

[9] Տե՛ս ՀԺՀ հ. IX, № 40. Մանավկերտ, Ե., 1968, էջ 223-230:

[10] Նույն տեղում, էջ 223:

[11] Տե՛ս նույն տեղում, հ. XVIII. Պարսկահայք, № 76, Ե., 2016, էջ 470-479:

[12] Նույն տեղում, էջ 470:

[13] Տե՛ս նույն տեղում, հ. VIII. Գուգարք (Լոռի), № 77. «Քյասըբի կերածը վարցկն ա», Ե., 1977, էջ 472-474:

ա, քառսուն օր, քառսուն քշեր ուտացնըմ, խմացնըմ, քեփ անիլ տալի, ասըմ.– Քյասըբի կերածը վարցկն ա»[1]:

Մի շարք հայկական հեքիաթներում ողորմածությունը պատճառաբանվում է հերոսների **կրոնական** վարքագծով, քանի որ այն փոխկապակցված է հանդես գալիս մեղքի ըմբռնման հետ:

«Ասսու պահած գառը գելը չի ուտի» հեքիաթում[2] թագավորի ողորմասիրությունն ու արդարամտությունը դիտվում են իբրև ճշմարիտ հայ-քրիստոնյայի բնորոշիչներ. «Էս թագավորը ընենց մի խղճմտանքով մարդ ա ըլնում, ընենց մի արդար դատաստան անող, աղքատներին, անճարներին ողորմող, որ քոմմա սրա անըմովն ին օրդում ուտում՝ ընե՞նց մի հայ-քրիստոնյա մարդ ա ըլնում»[3]: «Չարիքի դեմ բարիք» հեքիաթում[4] իր արտահայտությունն է գտել չարությունը չարությամբ չփոխհատուցելու քրիստոնեական գաղափարը[5]:

Լոռուց գրառված «Ազգային հեքիաթում»[6] վարդապետի կուտակած գանձն ու հարստությունը, որը նա գավազանի մեջ պահելով պատվիրել էր թաղել իր հետ, կաթողիկոսի անեծքով վերածվում են որդերի և սկսում կրծել նրա դիակը, քանզի նրա մտքով չէր անցել նույնիսկ իր հոգու համար այդ թանկարժեք քարերը բաժանել աղքատներին[7]: Ալաշկերտից գրառված «Դժոխք ուր միտ չբերող աղէկութէն (բարիք) չէնայ»[8] ասացվածքը հիմնավորում է հոգու փրկության համար արվող բարիքը:

«Կենդանիներն իբրև հարսնացու» վերտառությամբ ATU 402 թվահամարի հեքիաթների որոշ տարբերակներում հանդիպում է այլաշխարհքում պատժվողների մոտիվը, որոնք աղքատին իրենց կյանքում մերժել են և չեն ողորմացել:

Մոկսից գրառված «Սըլտան Փարիշան» հեքիաթում[9] այնկողմնային աշխարհում Միրզամահմատը տեսնում է մի ծերունու, որ նստել էր ձյան վրա, մինչդեռ կողքին մինչև առաստաղը հասնող անկողիններ կային դրված, սակայն դրանցից չէր կարողանում օգտվել, քանի որ երկրային կյանքում մի ճամփորդ մարդու մերժել էր քնելու համար ներքնակ տրամադրել, որպեսզի չոջլոտի այն: Այժմ այդ մեղքի համար նրան արգելված էր վերցնել այդ ներքնակներից և օգտագործել:

Աղքատին մերժելը ընկալվում է իբրև մեղք և ի վերուստ սպառնում է պատժով[10]: Հացթուխը, որը շատ տարբերակներում է հանդիպում[11], քսան տաշտ հացը դիմացը շարված, կրկնում էր՝ «Իս անութը մեռա»[12]: Խոհարարը, գլխին հաց-պանիր դրած մարդը, քաբաբչին, կթվորուհին, ջրկիրը[13], որոնց մոտ և՛ միս կար, և՛ հաց-պանիր, քաբաբ, կաթ և ջուր, անվերջ կրկնում էին՝ ծարավ մեռա, անոթի մեռա, հաց ու պանիր լիներ, ուտեի, կաթ կամ ջուր լիներ, խմեի: Հերոսի հարցին, թե ինչու նրանք չեն օգտվում իրենց մոտ եղածներից, նրանք պատասխանում են, որ կենդանության օրոք նրանք մերժել են աղքատներին, հետևաբար այժմ կրում են իրենց պատիժը[14]:

---

[1] Նույն տեղում, էջ 474:

[2] Տե՛ս նույն տեղում, հ. II. Այրարատ, № 23, Ե., 1959, էջ 295-309:

[3] Նույն տեղում, էջ 295:

[4] Տե՛ս ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Ե. Լալայանի ֆոնդ, FAIII:5606-5629:

[5] Տե՛ս Մատթեոս 5:38-48:

[6] ՀԺՀ, հ. VIII. Գուգարք (Լոռի), № 138, էջ 827-830:

[7] «Արտա Վիրապ նամակում» դժոխքի և դրախտի պարունակներում շրջելուց հետո Աուհարմազդը Արտա Վիրապին ասում է. «Այս և թող հայտնի լինի ձեզ, որ փոշի է դառնալու եզը և փոշի է դառնալու ձին, փոշի է դառնալու ոսկին ու արծաթը, և փոշի է դառնալու մարդկանց մարմինը: Նա միայն չի խառնվի փոշու հետ, որ աշխարհում դրվատում է առաքինությունը և իր պարտքն ու բարեգործություն է կատարում» (Արտա Վիրապ նամակ, Յուշտի Ֆրիան, պահլավերեն բնագրից թարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Ռ. Աբրահամյան, Ե., 1958, էջ 113):

[8] Նժդեհեան Գ., Ալաշկերտի բանաւոր գրականութիւնից, «Ազգագրական հանդէս», գիրք XIX, Թիֆլիս, 1910, էջ 97:

[9] Տե՛ս ՀԺՀ, հ. XVII. Մոկս, № 41, Ե., 2012, էջ 383-390:

[10] Տե՛ս նույն տեղում:

[11] Տե՛ս նույն տեղում, հ. XVIII. Պարսկահայք, № 41 «Սեյրի օցի խեչաթը», Ե., 2016, էջ 252-260; ՀԱԲ 14, Գրիգորյան Ռ., Գեղարքունիք, № 7(15) «Աջեբսանդալի խեքաթը», Ե., 1983, էջ 92-95; ՀԱԲ 25, Խեմչյան Է., Իջևան (Զորոփոր), № 15(15) «Թաքավորի պուճուր տղեն էն դունյըմը», Ե., 2008, էջ 87-89;

[12] ՀԺՀ, հ. XVII. Մոկս, № 41 «Սըլտան Փարիշան», էջ 387:

[13] Տե՛ս նույն տեղում, էջ 383-390; նույնը, հ. IV. Ջավախք, № 50 «Անթիու աշխարք էրթցող տղան», Ե., 1963, էջ 394-398; ՀԱԲ 14, Գրիգորյան Ռ., Գեղարքունիք, № 7(15) «Աջեբսանդալի խեքաթը», Ե., 1983, էջ 92-95:

[14] Տե՛ս ՀԺՀ, հ. XVII. Մոկս, № 41 «Սըլտան Փարիշան», Ե., 2012, էջ 383-390:

XIX դ. գրառված «Հոգի և մարմին» քնարական ժանրի ստեղծագործության մեջ պատկերվում է Վերջին Դատաստանը, որի ժամանակ մեղավորներն ու արդարները դատվում են ըստ իրենց արած բարիքի, և նժարի վրա են դրվում մեղքն ու վարձքը.

Ամեն խոգի գնաց կանգնաւ վըր իւր մարմնին.
Ինչ որ մեղաւորն էր, ձեռ ծոց, ափ երեսին,
Ասաց դիւ վեր էլի գարշելի մարմին,
Ախ քեօ տեղաց, ամուր աղքատին չտուիր կտոր մը հաց,
Ձիս սևցուցիր մըջ էն մեղաց, Դատաստանին մեկ ճարըմ ձի:
Ինչ որ արդար խոգին էր,
Ուրախելին գնաց վըր ուր մարմնին,
Ասաց դիւ վեր ելի, ախպէր մարմին,
Դիւ շատ տուրս ողորմութիւն տուիր ամուր աղքատին,
Ձիս պայծառ պախիր մըջ աշխարքին,
Էլի գնանք դատաստան Տէր ստեղծողին,
Մեղք ու վարձքը կըկշռին[1]:

Բարեգործության հաճախադեպ շարժառիթը **մեղքերի քավության** արժանանալու ձգտումն է[2], որը տեսնում ենք հայ ժողովրդական հեքիաթներում[3] ևս: «Դամըրճու հեքիաթում»[4] թագավորի աղջիկը ակամա դառնում է երեխայի մահվան պատճառ, դրանից զատ՝ հարկադրված սպանության է դիմում՝ սեփական անձը վարկաբեկումից փրկելու համար: Այնուհետև թագավոր հորից փող է ուզում, որպեսզի աղքատանոց բացի. «Էնքան մարդու հ'արունքը մտա, մե մունտըռիմ հ'երեսեն, հիմի իմ խիղճս ինձի կը տանջե: Գուզեմ օր խեյրաթխանեմ բանամ, մեղքիս թողութեն էղնի»[5]:

Սլավոնական մշակույթում համարում էին, որ աղքատները ողորմություն են ստանում հարուստներից, իսկ հարուստները դրանով արժանանում են ներման և Աստծո գթությանը[6]: Մարդը ողորմություն է տալիս՝ ձգտելով մեղքերի քավության, նպատակների իրագործման[7] և մահից հետո սպասվող վիճակի թեթևացման[8]:

«Բյուրապատիկը» հեքիաթում[9] այգեպանին Աստված ասում է, որ նրա այգին կկանաչի և պտուղ կտա այն ժամանակ, երբ այն պարսպապատված չի լինի, և անցնող-դարձողներն էլ կօգտվեն ծառերի պտուղներից, իսկ հակառակ պարագայում ծառերը կկանաչեն ու կրկին կչորանան[10]:

---

[1] *Քնար մշեցւոց և վանեցւոց, ժողովեաց Ար. վրդ. Սեդրակեան, ի Վաղարշապատ, 1874, էջ 13-14:*

[2] *Մեղքը բարիքով հատուցելու գաղափարն է արտացոլված նաև Հ. Ք. Անդերսենի «Եդեմական պարտեզ» հեքիաթում, որտեղ Մահը հնարավորություն է ընձեռում փոքրիկ արքայազնին ճամփորդել աշխարհով մեկ և քավել մեղքը բարի գործերով: Եդեմական այգին կրկին մտնելու պայմանը բարությունն ու բարեպաշտությունն են դառնում (տե՛ս Андерсен Г. Х., Сказки, Москва, 2005, с. 141):*

[3] *Տե՛ս ՀԺՀ, հ. VIII. Գուգարք (Լոռի), № 92, «Երեք դարդատեր», էջ 532-547:*

[4] *Նույն տեղում, հ. IV, № 9, Ե., 1963, էջ118-125:*

[5] *Նույն տեղում, էջ 120:*

[6] *Տե՛ս Байбурин А., Топорков А., У истоков этикета, Ленинград, 1990, с. 128.*

[7] *Դժվարին վիճակում հայտնվելիս, ծանր հիվանդության դեպքում կամ որևէ նպատակի հասնելու աղերսանքով Արճակում «թապա հաց» էին խոստանում Աստծուն: Կեսգիշերին հաց թխելով՝ երդիկներից ցած էին գցում երկու-երեք լավաշ: Տանտերը, ստանալով դրանք, ասում էր «Ասպած ընթունելի անի»: Իսկ մատաղ անելիս միսը մսաջրով բաժանում էին մարդկանց: «Մատաղ, թե թապա հաց կանչող անձն ինքը չէր ճաշակում ոչ մեկից և ոչ էլ հյուրասիրում էր բարեկամներին» (տե՛ս ՀԱԲ, հ. 8 Արճակ, Ավագյան Ս. (Սերինե), Ե., 1978, էջ 91):*

[8] *Տե՛ս Левкиевская Е., Нищий, Славянские древности, Москва, с. 410.*

[9] *Տե՛ս Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Ե., 1978, էջ 186-189:*

[10] *Նույն գաղափարն է ընկած նաև անգլիացի գրող Օ. Ուայլդի «Եսասեր հսկան» հեքիաթում, որտեղ եսասեր հսկայի այգում հաստատվում են Կարկուտը, Հյուսիսային Քամին, Սառնամիքն ու Ձյունը, քանի որ այնտեղ արգելված էր երեխաների մուտքը: Գարունը վերադառնում է այն ժամանակ, երբ վերադառնում են երեխաները (տե՛ս Ուայլդ Օ., Հեքիաթներ, Ե., 2011, էջ 28-33):*

«Կախարթը»[1], «Ծերունիկին հէքեաթն»[2], «Պառավ կնգանը հաքյաթը»[3], «Իրեք տղա, մե մեր»[4] հեքիաթներում հերոսները վերջում կորցնում են իրենց շնորհված ունեցվածքը, քանի որ դրանից չեն հյուրասիրում աղքատներին: Սլավոնական ավանդության համաձայն՝ Քրիստոս և սրբերը կարող են ներկայանալ աղքատի կերպարանքով՝ մարդկանց առաքինությունները փորձելու համար: Ուստի աղքատը կարող է ընկալվել իբրև Աստծո երկրային փոխանորդ[5]: Քրիստոս շրջում է երկրի վրա, ընդունելով մուրացկանի կերպարանք և փորձելով մարդկային գթասրտությունը, պատժում է անսիրտներին, ժլատներին և պարգևատրում է ողորմացողներին և բարիներին[6]: Այս համոզմունքը հիմնված է այն բանի վրա, որ Քրիստոս աղքատներին ուղղված սիրո և գթասրտության գործերը նույնացրել է իրեն արված սիրո և բարության գործերին[7]: Կիլիկիայի հայերն ասում էին, որ աղքատին փող տվողն Աստծուն է տված լինում[8]: Բորչալուում կենցաղավարող մի ավանդազրույցի համաձայն՝ կրիան մարդ է եղել և Քրիստոսի հետ ճանապարհ գնալիս իր պաշարից հաց է հյուրասիրել Քրիստոսին: Վերջինս էլ իրականություն է դարձրել նրա երազանքը և շրջակա քարերը ոչխար դարձրել: Մի օր էլ Քրիստոս հյուր է գալիս նրան աղքատի կերպարանքով, իսկ մարդը մերժում է նրան կաթ տալ, կանչում է իր շներին, որ պատառոտեն նրան: Քրիստոսի անեծքով ոչխարները կրկին քար են դառնում, իսկ հովիվը՝ կրիա[9]: Արջը մի ժամանակ այգեպան է եղել: Աղքատի կերպարանքով ներկայացած Քրիստոս մի ողկույզ խաղող է խնդրել նրանից, սակայն մերժվել է: Ուստի անիծել է այգեպանին, որ արջ դառնա, իսկ այգին էլ՝ անտառ[10]:

Այս ավանդազրույցներում ընդգծվում է ոչ միայն հարուստ-աղքատ սոցիալական հակադրությունը, այլև վերջինս սրվում է հարուստի բարոյական հատկանիշներով՝ ժլատությամբ և անողորմությամբ: Սոցիալ-բարոյական նորմերի խախտումների հետ կապված այս առասպելները այն ժամանակաշրջանի արդյունքն են, երբ «սոցիալական հակասություններն ու դրանց կրոնաբարոյախոսական վերահսկումն ու կանխումը կազմում էր հասարակական էթիկայի ու գաղափարաբանության կարևոր նորմերից մեկը»[11]:

Թե՛ ազգագրության և թե՛ բանահյուսության մեջ գոյություն ունեն կանոնիկ-եկեղեցական վարդապետական քրիստոնեությունից տարբերվող ժողովրդական քրիստոնեության դրսևորումներ: Ասածին իբրև օրինակ կարող ենք բերել AT 756 C թվահամարի՝ «Մեծ մեղավորը» վերտառությամբ հեքիաթախումբը, որտեղ ժողովրդական քրիստոնեության նման պատկերացում հանդիպում է վարձքի մասին: Այստեղ մարդիկ մեղքերից մաքրվում, արդարանում և վարձք են անում՝ անգամ սպանություն գործելով: «Չարախօսելը մեղք է»[12] հեքիաթում մարդը իր հանցանքների քավության համար ցանում, հնձում է և արդյունքը բաժանում անցորդներին: Սակայն այն ժամանակ է տեսնում վառված որթատունկը կանաչած (այսինքն՝ մեղքերը ներվել են), երբ բարկացած, ակամա սպանում է ամուսնության պատրաստվող աղջկան չարախոսողին: «Մեռել

---

[1] Տե՛ս ՀԺՀ, հ. V. Արցախ, № 65, էջ 398-400:

[2] Տե՛ս «Հին աւանդական հէքեաթներ Խոտորջրոյ», հաւաքեց Հ.Մ. Հաճեան, Վիեննա, 1907, էջ 30-33:

[3] Տե՛ս ՀԺՀ, հ. VI. Արցախ-Ուտիք, № 27, էջ 147-148:

[4] Տե՛ս ՀԱԲ, հ. 14. Գեղարքունիք, Գրիգորյան Ռ., № 9 (17), էջ 96-97:

[5] Լեհերի մեջ գոյություն ուներ այն պատկերացումը, որ, ընդունելով աղքատին, մարդ ընդունում է Քրիստոսին (տե՛ս Левкиевская Е., Нищий, Славянские древности, Москва, с. 408): «Աղքատին ողորմութիւն տուողը փոխ է տալիս Աստծուն, եւ ըստ նրա տուածի էլ Աստուած պիտի հատուցի նրան» (Առակներ 19:17): «Եւ արդ եթէ հաւատաս անուտ բանին Աստուծոյ, ի միտ առ ճշմարտապէս, զի յորժամ զքաղցեալսն կերակրես, զՔրիստոս կերակրես. եթէ զջուր ծարաւոյն արբուցանես, զՔրիստոս արբուցանես, եթէ զհիւրս ընդունիս, զՔրիստոս ընդունիս, և թէ օտարին լինիս վանատու, Քրիստոսի ես ասպնջական, եթէ ի տեսս երթաս հիւանդին, առ Քրիստոս երթաս տեսանել. եթէ զնեղեալսն սփոփիցես, զՔրիստոս մխիթարես. եթէ անօգնականին օգնեսցես, Քրիստոսի լինիս օգնական, եթէ տկարացն սպասաւորեսցես, Քրիստոսի ես սպասաւոր, և զամենայն զոր քաղցելոցն մատուցանես, տաս ի ձեռս Քրիստոսի, և բազմապատիկ հատուցանէ յաւուրն յետնում» («Տեառն Յովհաննու Մանդակունւոյ հայոց հայրապետի Ճառք», ի Վենետիկ, ի յամի 1860, էջ 55):

[6] Տե՛ս «Народныя русскія легенды, собранныя Афанасьевымъ», Лондонъ, 1859, с. XV-XVI.

[7] Տե՛ս Մատթեոս 25:34-41; «Народныя русскія легенды, собранныя Афанасьевымъ», էջ XVI:

[8] Տե՛ս Սվազյան Վ., Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Ե., 1994, էջ 233:

[9] Տե՛ս «Ազգագրական հանդէս», X գիրք, Թիֆլիզ, 1903, էջ 193:

[10] Տե՛ս նույն տեղում, էջ 195:

[11] Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 250:

[12] Սվազլեան Վ., Պոլսահայոց բանահիւսութիւնը, Ե., 2000, էջ 108-109:

պղծողին սպանելը վարձք է» [1] և «Անփիծ ճքնավոր» [2] հեքիաթներում մահացածի դիակը սրբապղծողին սպանելը ոչ միայն մեղք չի դիտվում, այլև նույնիսկ վարձք է համարվում, և հերոսի բազմամյա հանցանքներին թողություն է տրվում:

Հեքիաթների հերոսները բարիք են անում աղքատներին իրենց և իրենց **հանգուցյալ հարազատների հոգու համար**: Ողորմություն տալով՝ մարդն ակնկալում է հանդերձյալ կյանքում ողորմության արժանացնել իր և իր մերձավորների հոգիները[3]: «Վարձկդ շունը տանի»[4] անեծքը ցուցանշում է վարձքի և դրա կորստի անչափելի կարևորությունը թե՛ անիծողի և թե՛ անիծվողի համար: Դեռևս հին եգիպտական «Մեռյալների գրքում», որտեղ հոգին պետք է ներկայանա աստվածներին, ինքնարդարացման համար ասվող և մեղքն անընդմեջ ժխտող խոսքերում շեշտվում է նաև նրա արած բարիքը. «Ես հագցրել եմ մերկերին»[5]: Մեղքից ձերբազատված հոգին աստվածների առջև կանգնում է իր կատարած բարի գործերով. «Ես բերել եմ ձեզ բարեգործություններ»[6]: Իսկ «Արտա Վիրապ նամակում», ըստ պարսիկների զրադաշտական պատկերացումների՝ բարի գործերն այն աշխարհում երևում են իբրև գեղեցկատես կին. «Ես վսեմ էի, քեզնով ավելի վսեմ դարձա այս բարի մտքի, բարի խոսքի և բարի գործի միջոցով, որ դու գործադրեցիր»[7]:

Առայսօր հայոց մեջ կիրառվող «օղորմի», «օղորմաթաս» արտահայտությունները մատնանշում են, որ մարդուն անհանգստացրել է մահից հետո հոգու հանգրվանի հարցը[8]: «Թազա փըսած խըխորցը հետե» հեքիաթում[9] ծերունին ծարավը կոտրում է խնձորով և «օղորմի տալիս» ծառը տնկողին: Նա այդ խնձորի սերմը հողի մեջ է դնում, որ ապագայում այն ծառ դառնա, և բարիք դառնալով՝ իրեն էլ «օղորմի» ասող լինի:

Մարիամ Աստվածածնին նվիրված մի ժողովրդական աղոթքում ասվում է.

Դուն ինձ տուր իշխանութին,
Իշխանութին, կարողութին,
Գնամ գործեմ շատ բարութին,
Հոքիս տանես արքայութին[10]:

Նույն ցանկությունն է ընկած Վաղարշապատում երգվող զատկական «Ավետիսի» հիմքում.

Մարիամ, Մարիամ, դու կուս ես,
Հոգով մարմնով յուս ես,
Էրթամ դադեմ բարութիւն,
Հոգիս տանես արքայութիւն[11]:

---

[1] *«Առակներ, ավանդություններ, անեկդոտնե. Ախալցխայի բարբառով», գրի առավ Ս. Մալխասյանց, Ե., 1958, էջ 57-58:*

[2] *ՀԺՀ հ. XIV, № 28, էջ 302-313:*

[3] *Հայոց տարբեր ապգագրական շրջաններում մինչ XX դարասկիզբը պահպանվում էր թաղման օրը աղքատներին հոգեճաշ տալու սովորույթը: Օրինակ՝ Բուլանըխում մահվան օրվանից մինչև տարին լրանալը օրական մեկ ման կերակուր և 3-4 հաց տալիս էին որևէ աղքատ ընտանիքի (տե՛ս Բենսէ, Բուլանըխ կամ Հարք գաւառ, «Ազգագրական հանդէս», Ե գիրք, Թիֆլիս, 1899, էջ 177): Ղալարում թաղման կարգը կատարելուց հետո գերեզմանի վրա աղքատներին շիլափլավ և մի-մի բաժակ գինի էին բաժանում, իսկ բարեկամներին հրավիրում էին մեռելատուն, ուր հոգեհաց էր տրվում նրանց (տե՛ս ՀԱԲ, հ. 10, Ղալար, Գևորգյան Գ., Ե., 1980, էջ 58): Լեռնային Ղարաբաղում, ըստ Ս.Լիսիցյանի, մեկ տարվա ընթացքում ննջեցյալի տանը տրվող բոլոր հոգեհացերը նրա հոգու կերակրման քողարկված ձևերն են (տե՛ս ՀԱԲ, հ. 12. Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Լիսիցյան Ս., Ե., 1981, էջ 60):*

[4] *Բորչալուի գաւառ, «Ազգագրական հանդէս», XI, Թիֆլիս, 1904, էջ 125:*

[5] *Աստվածների ժամանակը, Հ. Էդոյանի թարգմ., Ե., 2007, էջ 147:*

[6] *Նույն տեղում, էջ 173-174:*

[7] *Արտա Վիրապ նամակ, պահլավերենից թարգ. և ծանոթագրեց պրոֆ. Ռ. Աբրահամյան, Ե., 1958, էջ 51:*

[8] *Երանի՜ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն (Մատթէոս 5:7):*

[9] *Տե՛ս ՀԺՀ, հ. V Արցախ, № 81, էջ 467-468:*

[10] *Լալայեան Ե., Բորչալուի գաւառ, «Ազգագրական հանդէս», գ. IX, Թիֆլիս, 1904, էջ 36:*

[11] *Քաջբերունի, Հայկական սովորութիւններ. Տօներ, «Ազգագրական հանդէս», գ. VII-VIII, Թիֆլիս, 1901, էջ 129:*

«Սիմոն Կուպեցին հեքիաթում»[1] քույր ու եղբայր «իրանց հորը պատվով, պատարագով, ամեն կարգով տանում թաղում են: Աղքատներին բազում փարա ցրվում են»[2]: «Ժուժկալ թագուհին ու իր երեք տղի հեքիաթում»[3] թագավոր աներոջ թաղման օրը փեսան «բոլոր մեղավոր մարդկանցը բանդից ազատում ա, ներումն ա շնորհում, ժողովրդի խարջը պակասացնում, աղքատներին ու խեղճերին էլ բոլ փող՝ արծաթ ու ոսկի փայ անում»[4]: Աղքատի կերպարը կարող է ըմբռնվել իբրև այնկողմնային աշխարհից եկած, ուստի նրան կերակրելով՝ մարդը կերակրում է իր հանգուցյալ նախնուն[5]: Նախնիների պաշտամունքը հանդիսացող հոգեհաց տալու[6] ներքնիմաստը քրիստոնեական վարդապետության ազդեցությամբ փոխվել է և դարձել մահացածի հոգու համար աղքատներին տրվող բարեգործություն[7], որը նույնպես հանդերձյալ աշխարհում պիտի նրա հոգուն «սնունդ» դառնա:

Հայ ժողովրդական հեքիաթներում հանդիպում է անհյուրընկալ և առատաձեռն մարդկանց հոգեվարքի մոտիվը: Մարդկանց պատկերացումներում չար մարդը տանջալից մահվան է արժանանում, բարի մարդը՝ խաղաղ և լուսավոր: XIX դարավերջին համշենցի հայերը կարծում էին, որ «բարի մարդը հանգիստ ու թեթև է աւանդում հոգին, իսկ չարը՝ դժուար ու տանջուելով»[8]:

«Ով անի պարութին՝ կստանա անմահութին» հեքիաթում[9] հրեշտակը բացատրում է, թե ինչու երկու մեծահարուստների հոգիները տարբեր կերպ առավ. «Առաչինը վատ, չարագործ, փչացած մարթ էր. նրան տիե տանջիլով, չրչարիլով մահ տվի ու տժոխք ղրգյեցի: Էս երգրորթը արթար, պարի մարթ էր, նրան հանգիստ, հեշտ մահ տվի ու տրախտ ղրգյեցի»[10]:

Այսպիսով՝ հեքիաթներում ողորմատվությունը ճակատագրական նշանակություն է ունենում մարդկանց կյանքի հաջող ընթացքի, տևողության և մահվան կերպի[11] վրա:

ԲԱՐԻՔԸ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ԵՎ ԻՐԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Ամարնե-Թոմփսոն-Ութերի հեքիաթների միջազգային համացույցով առանձնացվում են կենդանական, հրաշապատում և իրապատում հեքիաթներ: Վերջինիս մեջ զետեղված են նաև «կրոնական հեքիաթները», որ բովանդակում են նաև բարեգործության մոտիվները: Բովանդակային առումով հրաշապատում հեքիաթներում բարեգործությունը կամ նրա գաղափարը զուտ մոտիվի մակարդակում է հանդես գալիս, իսկ իրապատում հեքիաթների դեպքում ամբողջ սյուժեն կարող են լինել բարիքն ու ողորմատվությունը, որի ժամանակ հեքիաթը դառնում է ամբողջովին բարոյախրատական:

Հրաշապատում հեքիաթից սկսած՝ հանդիպում են բարության, ճշմարտության, արդարության, գեղեցկության մասին ժողովրդական պատկերացումները, որոնք բնորոշում են հրաշապատում հեքիաթի բարոյախոսությունը: Եվ բարին հեքիաթում հաղթանակ է տանում չարի նկատմամբ: Հերոսին օգնում են այն կենդանիները, որոնց նա խղճացել է, թշվառ աղջիկը հաղթության է հասնում, քանի որ նա հեզ է, բարի ու աշխատասեր[12]:

---

[1] Տե՛ս ՀԺՀ, h XVI, № 36, Ե., 1963, էջ 319-329:

[2] Նույն տեղում, էջ 320: Տե՛ս նաև նույնը, h. IX, № 16. «Անհավատարիմ կնոջ ամոթանքը», Ե., 1968, էջ 129:

[3] Տե՛ս ՀԺՀ, h. VIII. Գուգարք (Լոռի), № 98 «Ժուժկալ թագուհին ու իր երեք տղի հեքիաթը», էջ 592-607:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 594:

[5] Տե՛ս Байбурин А., Топорков А., У истоков этикета, Ленинград, 1990, с. 129.

[6] Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, h. Ա, Ե., 1966, էջ 438:

[7] Այս մասին մանրամասն տե՛ս Լալայեան Ե., Ծիսական կարգերը հայոց մէջ ըստ Հ. Սպենսերի. Ընծաներ, «Ազգագրական հանդէս», գ. XXIII, էջ 208-214:

[8] Մուրադեանց Յ., Համշէնցի հայեր, «Ազգագրական հանդէս», Ե գիրք, էջ 401:

[9] Տե՛ս ՀԺՀ, h. VI. Արցախ-Ուտիք, № 114, էջ 485-489:

[10] Նույն տեղում, էջ 486:

[11] Երեխաներին այս միտքը հասանելի դարձնելու նպատակով դանիացի նշանավոր հեքիաթագիր Հ.Ք. Անդերսենն իր «Օլե Լուկոյեն» հեքիաթում դիմել է հետևյալ հնարքին. Մահը մարդկանցից պահանջում է նրանց վարքի գնահատականները: Նրանք, որոնք ունեն լավ գնահատական, նրանց Մահը նստեցնում է իր առջևում և ուրախ հեքիաթ պատմում, իսկ նրանք, որոնք միջակ կամ վատ գնահատականներ ունեին, նստում էին Մահվան ետևում և լսում սարսափելի հեքիաթ (տե՛ս Հ. Ք. Անդերսեն, Հեքիաթներ, Ե., 2005, էջ 105-106):

[12] Տե՛ս Померанцева Э., Русская народная сказка, Москва, 1963, с. 61.

Վերջինիս տիպիկ օրինակ է հայ ժողովրդական «Խորթ ախճկա նաղըլը»[1]:

Հեքիաթը սահմանվում է իբրև «մի անցքի պատմութիւն՝ լի առասպելական արկածներով, որ ընդհանրապես վերջանում է բարի, անվեհեր, հնարագէտ հերոսի հաղթանակով և չարերի պատիժով»[2]:

«Մարդու աղեկութեն չը կուրուսիր» հեքիաթում[3] հերոսը փողոցի տղաներից գնում է շուն, կատու, մուկ, օձ, որոնք նրան հետագայում օգնում են: Պարզվում է, որ օձը թագավորի կախարդված որդին է, որը ստանում է իր մարդկային կերպարանքը շնորհիվ այն բանի, որ տղան նրան կերակրում է: *« – Ես էսա քաղքի թագաւորի տղէն եմ: Օր մի կպառուու խոգին շատ խանի, պառաւն էլ ուր գաւապանով էկար կի ւ'ասաց.*

Օձ տ'եղնիս, վըր քո փորուն սող տի տաս, չուր ադամորդի մի քե բրդուճ մի խաց տայ: Պառաւ կուր ասած գիտեր. ադամորդին հէչ վըր օձուն կը մեղքենա՞յ: Ամա դու մեղքեցար վըր 'ծի: Մնաս բարով, ես տ'երթամ ու կքո աղեկութեն տը պատմեմ իմ խօր: Իմ խէր կքի ղանչել տի տայ ու կքո սիրտի ուկած տի տա քէ»[4]*:*

Հերոսի դրսևորած մեծահոգությունը պարգևատրվում է[5]: Նրա օգնությունը կենդանիներին Վ. Պրոպը բացատրում է իբրև հակադրություն եսասիրությանը, խղճահարություն դեպի թույլերը և օգնության կարիք ունեցողները[6]. «Դա իր տեսակի հումանիզմ է»[7]: Չնայած որ այդ բարձր մարդկային հատկանիշները հեքիաթի ավելի ուշ շերտն են կազմում, քան այն դեպքերը, երբ հերոսը հաջողության է հասնում ցանկացած միջոցով, հատկապես՝ խորամանկության[8]:

Ամարնե-Թոմփսոն-Ութերի «Հեքիաթների միջազգային տիպերում» առանձնանում է «Երախտագետ հանգուցյալը» վերտառությամբ ATU 505 թվահամարը: Թաղելով մեռած մարդու մարմինը, որին ոչ միայն չէին հուղարկավորել, այլ նաև անարգում էին նրա պարտքերի պատճառով, հերոսը ձեռք է բերում օգնական՝ ի դեմս երախտագետ հանգուցյալի[9]:

Հայ ժողովրդական իրապատում հեքիաթներում բովանդակային առումով բարիքի գաղափարը ավելի գերակշիռ տեղ է զբաղեցնում սյուժեի զարգացման մեջ:

Այրարատից գրառված «Աստված խրատեց տերտերին» հեքիաթում[10], որը զուգադրվում է բարիքի՝ անտիկ առասպելաբանական պատկերացումների արտացոլումը հանդիսացող Միդասի առասպելի[11] հետ, ընչասեր քահանան երազում է, որ ոսկի դառնա այն ամենը, ինչին ինքը կդիպչի: Սակայն երբ ոսկի են դառնում նրա կերակուրները և դուստրը, հասկանում է իր սխալը և զղջում է իր խնդրանքի համար: Երբ նորից անցնում է կյանքի բնականոն ընթացքին, կոտրում է տան պատուհանի ոսկյա ճաղերը և բաժանում աղքատներին:

Ամարնե-Թոմփսոն-Ութերի միջազգային հեքիաթների տիպերի՝ ATU 332 + ATU 1199 թվահամարի «Մահը հետաձգելու խնդրանք» հեքիաթախմբում[12] հերոսին արգելված էր ամուսնանալ, քանի որ հակառակ դեպքում նրան մահ էր սպասում: Սակայն նա վերստանում է իր կյանքը աղքատներին արած իր ողորմության շնորհիվ:

Որոշ հեքիաթներում մահվան կանխագուշակումը հերոսի դեպքում անխուսափելիորեն կատարվում է: Հեքիաթների մնացյալ մասը՝ իբրև ավելի ուշ շրջանի փոփոխությունների արդյունք, բարոյաուսուցողական պատումներ են[13], որտեղ ճակատագրի անխուսափելիությանը

---

[1] *Տե՛ս ՀԺՀ հ. XVIII, № 78. «Խորթ ախճկա նաղըլը», Ե., 2016, էջ 486-493:*

[2] *«Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, Ե., 1944, էջ 104:*

[3] *Տե՛ս Տարօնեան Ե., Բաղէշի նահանգի Խուլթիկ գիւղի բարբառը, Անթիլիաս, 1961, էջ 134-139:*

[4] *Նույն տեղում, էջ 135:*

[5] *Տե՛ս Пропп В., Русская сказка, Ленинград, 1984, с. 183.*

[6] *Տե՛ս նույն տեղում, էջ 187-188:*

[7] *Նույն տեղում, էջ 188:*

[8] *Տե՛ս նույն տեղում:*

[9] *Տե՛ս նույն տեղում, էջ 184:*

[10] *Տե՛ս ՀԺՀ, հ. I. Այրարատ, № 8, Ե., 1959, էջ 584-586:*

[11] *Տե՛ս Կուն Ն., Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Ե., 1989, էջ 113-114:*

[12] *Տե՛ս ՀԺՀ, հ. VIII. Գուգարք (Լոռի), № 77. «Քյասըբի կերածը վարցկն ա», էջ 472-474; նույնը, հ. I. Այրարատ, № 3. «Ձաքար», Ե., 1959, էջ 557-560; նույնը, հ. VI. Արցախ-Ուտիք, № 114. «Ով անի պարութին՝ կստանա անմահութին», էջ 485-489:*

[13] *Տե՛ս Վարդանյան Ն., Հայոց իրապատում հեքիաթը. Ժանրային-տիպաբանական քննություն, Ե., 2009, էջ 25:*

քրիստոնեական գաղափարախոսությունը հակադրում է կարիքավորներին օգնության ձեռք մեկնելով Աստծո ողորմությանն արժանանալու և վարձքի գաղափարը[1], քանի որ ժողովուրդը բանահյուսության համար սյուժեներ է վերցնում անցյալի ավանդություններից՝ նրանցում ներմուծելով իր հավատալիքներն ու բարոյական ըմբռնումները՝ բնորոշ պատմական զարգացման այս կամ այն դարաշրջանին[2]:

«Զաքար» հեքիաթում[3] Զաքարին ասվել էր, որ պսակի օրը նա կմեռնի: Եվ երբ նա աղքատների առաջ բացում է ցորենի ամբարը, հարսնացուի հետ աղքատներին հագցնում է, նրա կյանքը երկարաձգվում է. «Զաքար, քու տված ողորմութունը առ Աստված հասավ. գնա,– ասեց,– դու ինքդ եռեսունըհինգ տարեկան իր, աստվածութունը օխթանասունըհինգ տարի էլ ժամանակ տվեց»[4]:

Միջնադարյան ձեռագրերում հանդիպող զրույցները ևս քրիստոնեական խմբագրությամբ ավարտվում են մահվան հետաձգմամբ, քանի որ մարդու կյանքն ու մահը Աստծո ձեռքին են, և կյանքը կարող է երկարել ողորմած և աղքատասեր լինելու պարագայում[5]:

Բարոյախրատական հեքիաթները կրում են «Հայելի վարուց» և քրիստոնեական այլ խրատական ժողովածուների ազդեցությունն ու կնիքը, որոնցում ընդգրկված սյուժեները իրենց հերթին կարող են բանահյուսական ծագում ունենալ[6]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ քննելով բարեգործության դրդապատճառները հեքիաթներում՝ կարող ենք ասել, որ հերոսները բարիք են անում մեղքերի քավության, որդեծնության և դրախտային կյանքին արժանանալու համար: Ողորմատվությունը փոխում է հեքիաթների հերոսների կյանքի ընթացքը, տևողությունը և մահվան կերպը: Աղքատի կերպարի ընկալումը ժողովրդի կողմից և նրան բարիք անելը իրենց նույնատիպ արտացոլումն են գտել հայ բանահյուսության տարբեր ժանրերում ևս: Հայ ժողովրդական հեքիաթացանկում առանձնանում են հեքիաթներ, որոնցում բարեգործությունը կամ դրա գաղափարը մի էպիզոդ է կամ սյուժեի բաղադրիչ մի մոտիվ, հեքիաթներ, որտեղ բարիք անելը փոխում է հեքիաթային սյուժեի ավարտը, և առավել ուշ շրջանից կենցաղավարող ամբողջությամբ բարոյախրատական հեքիաթներ, որոնց սյուժեները երբեմն զուգադրվում են քրիստոնեական վարքագրական զրույցների հետ:

Кристина Айвазян, БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ. Благотворительность веками существовала в армянском народе. Ещё армянские повествователи писали о благотворительности армянских царей, князей и их жён. Благотворительность нашла свое отражение также в армянских народных сказках и других фольклорных жанрах, и для этого имелись определенные социально-психологические и религиозные основания. Герои армянских сказок делают благо ради того, чтобы Господь пожалел их, и у них родились дети, или ради того, чтобы спасти свои души и души своих усопших родных, или ради искупления своих грехов. Своеобразной гуманностью в сказках считается помощь животным. В данной статье рассматриваются волшебные и бытовые сказки, в которых тематика благотворительности отображается эпизодически или в целостности.

Ключевые слова: *благотворительность, армянские народные сказки, мотивация, деторождение, искупление грехов, богатый, бедный.*

---

[1] *Տե՛ս Զաքարյան Ե., Հեքիաթի հրաշագործ օգնականը և հայոց հարսանիքի քավորը, «Հայ ժողովրդական մշակույթ», XVI, «Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում», Ե., 2014, էջ 438:*

[2] *Տե՛ս «Народныя русскія легенды», էջ V:*

[3] *Տե՛ս ՀԺՀ, հ. I. Այրարատ, № 3, էջ 557-560: Տե՛ս նաև նույնը, հ. XVII. Մոկս, № 17, էջ 143-148:*

[4] *Նույն տեղում, էջ 560:*

[5] *Տե՛ս Սահակյան Ա., Հայ միջնադարյան ժողովրդական մշակույթի խնդիրներ. Հեքիաթ. Խաչքար, գիրք 1-2, Ե., 2017, էջ 69-71:*

[6] *Տե՛ս նույն տեղում, էջ 79-80:*

Christina Ayvazyan, CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES. Charity has existed among the Armenian people for centuries, as far back as Armenian narrators wrote about the charity of Armenian kings, princes, and their wives. Additionally, charity was reflected in the Armenian folk tales and other folklore genres, and for that, there were certain socio-psychological and religious motives. The Armenian folk tales' heroes are benevolent in order Lord would take compassion upon them, and they could give birth to children, save their souls and the souls of their deceased relatives, and for the expiation of their sins. Another type of incredible human kindness in the fairy tales is helping the animals. This article examines fairy tales and household tales in which charity themes are presented partly or as a wholly.

Key words: *charity, Armenian folk tales, motivation, childbearing, expiation of sins, rich, poor.*